ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

19 դեկտեմբերի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

181
(2847)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ՎՃՌՈՐՈՇ ՇԱԲԱԹ Է

Դեկտեմբերի 23-ին կայանալիք ՀՖՖ նախագահի ընտրություններին առաջադրված են երկու թեկնածուներ՝ գործող նախագահ Արմեն Մելիքբեկյանը եւ հայտնի ֆուտբոլիստ Արազ Օզբիլիզը: Նախկին լրագրող Մելիքբեկյանն անցած շաբաթ վերջապես «աչքի ընկավ» հրապարակային խոսքով ու հարցազրույց-հաշվետվություն տվեց իր լրատվական ծառայությանը: Մելիքբեկյանը ջանք չէր խնայում «գոյություն» չունեցած արդյունքներ նկարագրել, օրինակ՝ թե ինչպես են ծրագիր իրականացրել «Կույր ֆուտբոլի» ոլորտում, կանանց թիմեր են ստեղծվել, ազգային հավաքականը վերջապես մեկ հաղթանակ է տարել եւ այլն: Իհարկե, լրագրողներից խուսափող, հարցումներին ու հեռախոսազանգերին չպատասխանող Մելիքբեկյանը թերեւս հասկանում է, որ միլիոնավոր դոլարների մուտքեր ունեցող ընկերության ղեկավարին շատ հարցեր կան տալու, ու գնալով խնդիրները մեծանում են: Օրինակ՝ այդպես էլ մեկնաբանություններ չեղան, թե ինչու Աբովյանի մարզադաշտի վերականգնման մրցույթը շահեց Հակոբ Սիմիդյանի ընկերոջ հետ փոխկապակցված ընկերությունը, որը նման աշխատանքների փորձ չուներ եւ ավելի բարձր գնով է կատարել դա, քան այլ ընկերություն կաներ: Չպատասխանեց նաեւ, թե ինչու են հիմնական ներդրող ակումբները դուրս եկել իր դեմ՝ի դեմս «Ուրարտու» եւ «Փյունիկ» ակումբների, ինչու է ազգային հավաքականը խայտառակ պարտություններ կրում, ինչու մարզերում կառուցված փոքր դաշտերը շարքից դուրս են գալիս եւ այլն: Թերեւս Մելիքբեկյանի ինքնագովազդ ուղերձում հատկանշական էր բանակի թիմին՝ ԲԿՄԱ-ին վերաբերող մասը. համարել էր ԲԿՄԱ-ն հաջողված ծրագրերից, իսկ, որպես հաջողություն, նշում է, որ այս թիմից ազգային հավաքական են գնացել ֆուտբոլիստներ: Իհարկե, բանակում չծառայած Արմեն Մելիքբեկյանը չի նշի, թե ԲԿՄԱ-ում գրանցված քանի ֆուտբոլիստ է, ըստ էության, ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից: Նշենք, որ 2019թ.-ին հիմնադրված ակումբը, ըստ էության, բանակից ազատում է երիտասարդների, որոնք հետագայում կամ լքում են ֆուտբոլը, կամ հանդես են գալիս համեմատաբար թույլ թիմերում ու այդպես էլ չեն կատարում իրենց առաջ դրված խնդիրը, բայցեւ չեն զորակոչվում ազգային բանակ: Մամուլը բազմիցս գրել է, որ բարձրագույն խմբում հանդես եկող ԲԿՄԱ-ում եւ առաջին լիգայում խաղացող ԲԿՄԱ 1-ում հայտնվում են խաղացողներ, որոնցից մեկի ծնողը, օրինակ, գործկոմի անդամ է կամ այլ կապերով կապված է ՀՖՖ ղեկավարների հետ: Այդ երիտասարդները, որ չեն զորակոչվում, այդպես էլ հայկական ֆուտբոլի վաղվա օրը չեն դառնում ու, ըստ էության, այդպիսով լուծում են զուտ չզորակոչվելու խնդիրը:

Հ.Գ. Քանի որ ՀՖՖ-ն չի պատասխանում մեր հարցումներին ու զանգերին, հաջորդիվ կանդրադառնանք Խորեն Հովհաննիսյանի անվան մարզադպրոցի կառուցման ծախսերին ու հավաքված տվյալներ կներկայացնենք շինարարական ոլորտի ներկայացուցիչների փորձագիտական եզրահանգումից:



Իշխանական շրջանակներում ահագնացել են խոսակցություններն առ այն, որ դեկտեմբերի 22-ին Վերաքննիչ դատարանն ազատ է արձակելու շուրջ երեք ամիս կալանքի տակ պահվող Նարեկ Մալյանին: Իշխանությունները ցանկանում են 2024-ը դիմավորել հնարավորինս քիչ թվով քաղբանտարկյալների առկայությամբ, քանզի արեւտմյան կառույցները գնալով դժգոհում են, որ չեն կարող երկար «աչք փակել» Հայաստանում քաղբանտարկյալների գոյության փաստի վրա: Մեզ մնում է հետեւել իրադարձություններին՝ արձանագրելու, թե կուլիսային խոսակցությունները ինչ դրսեւորումներ կունենան իրականության մեջ:



ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանը պաշտոնի նշանակվել է 2021 թվականի հունվարի 27-ին: Ղուլարյանը մինչ Քաղաքաշինության կոմիտեի նախագահ դառնալը հարուստ եւ յուղալի պաշտոններով է անցել: Աշխատանքային գործունեությունը սկսել է 1976 թվականից՝ որպես Իջեւանի շրջանային խորհրդի գործկոմ: Ծնունդով Իջեւան քաղաքից, մասնագիտությամբ ճարտարապետ Ղուլարյանը եղել է նաեւ Իջեւանի գլխավոր ճարտարապետը, ապա՝ նույն քաղաքի քաղաքապետը, հետո՝ Տավուշի մարզպետը: 2014 թվականից եղել է ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ: 2018 թվականից եղել է նախարարի առաջին տեղակալ, ապա՝ կոմիտեի նախագահ: Նման հարուստ կարիերա ունեցող Ղուլամյանը 2022 թվականի եկամուտների, գույքերի, շահերի եւ ծախսերի հայտարարագրում հայտարարագրել է միանձնյա սեփականությամբ մեկ անհատական բնակելի տուն, որը 2013 թվականին ժառանգություն է ստացել: Մեկ բնակարան բազմաբնակարան շենքում էլ, որը գտնվում է Արաբկիր վարչական շրջանում, հայտարարագրել է՝ որպես այլ անձի սեփականության իրավունքով պատկանող, սակայն իր կողմից շահագործվող գույք: Կոմիտեի նախագահը 2019-ին Երեւանի կենտրոնում 21 մլն 475 հազար դրամով գնել է մեկ կիսակառույց: Ղուլարյանը տրանսպորտային միջոց չի հայտարարագրել, ինչը զարմանալի է: Ղուլարյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 4 մլն 492 հազար դրամ եւ 19 հազար 930 դրամ: Կանխիկ դրամական միջոցները կազմել են 4 մլն 500 հազար դրամ եւ 21 հազար ԱՄՆ դոլար: Ղուլարյանի՝ հաշվետու տարվա եկամուտները կուտակվում են միայն աշխատանքի վարձատրությամբ, որն էլ կազմում է 13 մլն 229 հազար դրամ՝ գրեթե 32 հազար ԱՄՆ դոլար: Ստացվում է, որ եկամուտների կեսից ավելին՝ գրեթե 8 մլն դրամը, Ղուլարյանը խնայում է եւ հայտարարագրում կանխիկ դրամ՝ 21 հազար դոլար, հակառակ դեպքում սա կոռուպցիոն ռիսկ է, քանի որ կանխիկ դրամական միջոցների ստացման աղբյուրը չկա, իսկ եկամուտը միայն աշխատանքի վարձատրությունն է: Ղուլարյանն իր նախկին հայտարարագրերում որպես եկամտի աղբյուր նշում էր կենսաթոշակը՝ 52 հազար դրամ, իսկ վերջին հայտարարագրում կենսաթոշակի մասին ոչինչ չկա: Ղուլարյանը ՀՀ զինված ուժերի փոխգնդապետ է, բայց բանակում չի ծառայել, համենայնդեպս, իր կենսագրության մեջ նշված չէ այդ մասին: Ղուլարյանը ՀՀ ամենաերկարակյաց մարզպետն է. ղեկավարել է Տավուշի մարզը 1999 թվականից մինչեւ 2014 թվականը՝ ամբողջ 15 տարի: Այս ժամանակահատվածում տավուշցիները դժգոհ են եղել նրա աշխատանքից: Նրանից հատկապես դժգոհել են սահմանամերձ, մշտապես թշնամու կրակահերթերի տակ գտնվող գյուղերի բնակիչները, որովհետեւ մարզպետի «վեջին էլ չի եղել», թե ինչ է կատարվել իր մարզում: Ավելին՝ տեղացիների պատմելով՝ նա շատ գյուղերի ճանապարհն էլ չի իմացել: Հավելենք նաեւ, որ Ղուլարյանի ղեկավարած Քաղաքաշինության կոմիտեն ղեկավարում եւ համակարգում է ՀՀ-ում շինարարության ոլորտը, որի փուչիկը, ասել է թե, փչված է, եւ պայթելուն քիչ է մնացել: Բանն այն է, որ բնակարանաշինության մակարդակը Հայաստանում վերջին հինգ տարիներին զգալիորեն բարձրացել է, ինչն էլ, ըստ տվյալների վերլուծաբանների, հանգեցնելու է բնակարանաշինության ոլորտում լճացման:

Երեկ, վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրամանով, Ամբակում Գրիգորյանը Քրեակատարողական ծառայության պետ է նշանակվել: Դեռ այս տարվա հոկտեմբերի 14-ին գրել էինք, որ, մեզ հասած սեղեկությունների համաձայն, ՔՊ-ականների մի հատված արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանին է առաջարկել Ամբակում Գրիգորյանի թեկնածությունը, սակայն նախարար Մինասյանը մերժել է: Մեզ հասած լուրերի համաձայն՝ նրան հասկացրել են, որ Գրիգորյանը միակ արժանի թեկնածուն է: Արդյունքում ամիսներ անց՝ նախարար Մինասյանի մերժումից հետո, իրավապահ համակարգը հաշվի չառավ նախարարի ցանկությունն ու նշանակեց իր ցանկալի թեկնածուին, քանի որ քաղաքական թիմը նրան էր տեսնում ՔԿՀ ղեկավարի պաշտոնում:

ԶՐՈՒՅՑ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆՆ ՈՒ ՄԵՐԺՎԱԾ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի զրուցակիցը ադրբեջանագետ, պատմական գիտությունների թեկնածու Տաթեւիկ Հայրապետյանն է:

-Տիկին Հայրապետյան, Դուք ակտիվորեն աջակցում եք նոր ձեւավորված «Զանգ» քաղաքացիական շարժմանը, որը պարբերաբար ակցիաներ է իրականացնում՝ բարձրաձայնելով հայ-ադրբեջանական հարաբերություններում առկա վտանգների մասին, բայց, կարծես, վերջին շրջանում շարժումը պասիվացել է, ակցիաներ չեն լինում: Ո՞րն է պատճառը, ինչո՞վ է զբաղված շարժումը:

-Դա պայմանավորված է մեր կազմակերպած տարբեր փակ հանդիպումներով: Մենք հիմա շտաբային աշխատանքներով ենք զբաղված, փորձում ենք ավելի ինտենսիվացնել հանդիպումները եւ դրա արդյունքում հասնել մարդկանց թվի ավելացմանը: Պատճառը միայն սա է. մենք մեր նպատակներից չենք հրաժարվել, պարզապես մտածում ենք, որ կարիք կա ավելի շատ աշխատանք կատարելու: Առաջիկայում մեր ակցիաները շարունակական կլինեն, քանի վտանգ կա, ու դա որեւէ կերպ լուծում չի ստանում, չենք կարող տանը նստել:

-Հասարակության արձագանքն ինչպիսի՞ն է, մարդկանց մասնակցությունը, ակտիվությունը բավարար գնահատո՞ւմ եք:

-Բնականաբար ոչ. իհարկե, եղանակային պայմաններն էլ են իրենց դերը խաղում, բայց պատճառները մի քանիսն են: Տարբեր խմբերի հետ աշխատանքի տարբեր ձեւեր կան, համենայնդեպս կարծում եմ՝ մենք կարողացել ենք մեդիայի միջոցով մարդկանց ուշադրությունը հրավիրել խնդրի վրա, որի մասին լռում էին մինչ այս. ոչ մեկն այս խնդիրների մասին չէր խոսում, ով էլ խոսում էր, նրան մեղադրում էին, որ ադրբեջանական խոսույթ են տարածում, բայց իրականությունն այն է, որ դա իրական վտանգ է, ու իշխանությունը ոչ մի քայլ չի ձեռնարկում այդ վտանգը չեզոքացնելու համար. հենց այս պահանջով էլ փողոց ենք դուրս եկել: Ես հույս ունեմ, որ մեր աշխատանքի եւ հանդիպումների արդյունքում մարդկանց թիվը գնալով կավելանա, եւ իրապես կկարողանանք այդ վտանգը չեզոքացնել: Ամեն անգամ ես ինձ հարցադրումը տալիս եմ, որ միգուցե ինչ-որ բան չափազանցնում եմ կամ սխալ եմ տեսնում, բայց ամեն անգամ բավական է՝ թերթեմ ադրբեջանական լրատվամիջոցները, ես տեսնում եմ՝ ինչ ակտիվությամբ է քարոզչություն տարվում, տեսնում եմ, որ իրենք պատրաստվում են գարնանը հնարավոր էսկալացիայի ճնապարհով գալ: Իրենց պետական հեռուստաընկերությունն առավոտից երեկո Արեւմտյան Ադրբեջանի քարոզն է տանում: Այս վտանգերի դեպքում ես կարծում եմ, որ ոչինչ չեմ կարող կանխատեսել, եւ որոշել եմ աջակցել «Զանգ» շարժմանը, որն ապակուսակցական է, քաղաքացիական եւ հստակ նպատակ է դրել խնդիրներ լուծել: Հույս ունեմ, որ գնալով ըմբռնող մարդկանց թիվը կավելանա, եւ կկարողանանք մեր նպատակին հասնել, այլապես հետեւանքները ծանր են լինելու բոլորիս համար՝ անկախ քաղաքական հայացքներից ու նախասիրություններից:

-Տիկին Հայրապետյան, 2018թ.-ին, երբ Նիկոլ Փաշինյանը հեղափոխություն էր իրականացնում, ակցիաներ էր իրականացնում, Դուք եւ «Զանգ» շարժման նախաձեռնող Սուրեն Սահակյանն աջակցում էիք նրան, նրա գաղափարակիցներն էիք, իսկ հիմա, երբ դուք եք փորձում ձեր դժգոհությունները հայտնել, ակցիաներ եք իրականացնում, տեսնում ենք, որ ճնշումներ են գործադրվում ակցիայի մասնակիցների նկատմամբ. ի՞նչ կասեք այս մասին:

-Աջակցության մասով ասեմ, որ պարոն Սահակյանն ավելի մեծ ներդրում ունի հեղափոխության հարցում տեխնոլոգիաների մասով, քան ես: Ես՝ որպես շարքային քաղաքացի եմ մասնակցել դրան, իսկ Սուրեն Սահակյանի եւ Նիկոլ Փաշինյանի աշխատանքն այլ բնույթ է կրել: Ինձ համար ակնհայտ է՝ Նիկոլ Փաշինյանը մերժել է բոլոր այն սկզբունքները, որով մենք 2018թ.-ին փողոց ենք դուրս եկել՝ «պադավատապետությունից» սկսած, Արցախի հարցը, իր որդեգրած քաղաքականությունը եւ հայ ժողովրդի նկատմամբ բոլոր իրավունքներից հրաժարվելը, նաեւ ագրեսիվ դիմադրությունը, որով ինքն արձագանքում է շարժումներին: Ակնհայտ է, որ այս ամենն իր հրամանով է արվում: Մենք որեւէ բռնի, անթույլատրելի արարք չենք թույլ տվել, որի համար կարող են մեր բարձրախոսը խլել կամ այլ ճնշումներ գործադրել. օրինակ՝ դեպքեր են լինում, որ գալիս ու մարդկանց դեմքերն են նկարում, ովքեր մեր հավաքներին մասնակցում են. բնականաբար, սա մեծ անհարամարություն է առաջացնում մեզ համար: Նիկոլ Փաշինյանը շատ լավ գիտի՝ մեր բարձրացրած խնդիրն իրական է ու լեգիտիմ. նա չի կարող հերքել, որ բանակցություններ է վարում՝ ադրբեջանցիների՝ արտոնյալ կարգավիճակով վերադարձի հետ կապված, նաեւ շատ լավ գիտի, որ մեզ չի կարող պիտակավորել «նախկին, թալանչի» ու նմանատիպ պիտակավորումներով: Մենք շատ ազնիվ ենք եղել մեր գաղափարներում, սկզբունքներում, մեզ մեկ նպատակ է այսօր փողոց հանել՝ ուզում ենք նորմալ պետություն ունենալ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Կանադայի արտգործնախարարի քաղաքական հարցերի համակարգող, հատուկ օգնական Արամ Շուջունյանը սոցցանցի իր էջում գրում է.

««Կանադայի այս հայտարարությունը չպետք է անարձագանք թողնել: Սա կարող է հիմք ծառայել հայկական կողմի բանակցային նոր ռազմավարության».

Կանադան ողջունում է երկու ադրբեջանցի եւ 32 հայ զինծառայողների ազատ արձակումը եւ դրական է գնահատում այն աջակցությունը, որ երկրները ցուցաբերել են միմյանց նկատմամբ միջազգային ատյաններում: Կանադան աջակցում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության բանակցային քաղաքական լուծմանը՝ հիմնված Հելսինկյան սկզբունքների վրա, եւ խրախուսում է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ վստահության ամրապնդման հետագա կոնկրետ միջոցառումները: «Նոյյան Տապան»-ի համար այս հայտարարությունը մեկնաբանում է քաղաքական վերլուծաբան Շահան Գանտահարյանը:

Գերիների փոխանակման համատեղ որոշումը ողջունում են եւ կողջունեն դեռեւս շատ պետություններ: Կանադայի արտգործնախարարության հրապարակած հայտարարությունը, սակայն, ունի կարեւոր առանցք, ինչպես դուք եք նշում: Նախ՝ պարզ տեքստով ասվում է, որ Արցախի բանակցային գործընթացը շարունակվելու է, եւ դրան աջակցում է Օտավան, ինչը ենթադրում է, որ չեն համարում, որ արցախյան հիմնահարցը փակվել է: Ավելին՝ այստեղ արվել է կարեւորագույն հղում Հելսինկյան եզրափակիչ ակտի սկզբունքներին, որոնց հիման վրա էլ ընթանում էին բանակցությունները: Նման դիրքորոշումով Կանադան շրջում է Բաքվի մարտավարությունը ոչ միայն հարցը չփակելու, այլ նաեւ ԵԱՀԿ-ի շրջանակներում բանակցությունները վերսկսելու առումներով: Արձանագրենք, որ հելսինկյան ակտի հիմնարար սկզբունքներից 8-րդը խոսում է ժողովուրդների իրավահավասարության եւ ինքնորոշման իրավունքի մասին: Արժի նշել, որ վերջերս Կանադայի արտգործնախարարը ժամանել էր Երեւան՝ ներկա լինելու համար ՀՀ-ում Կանադայի դեսպանության բացմանը: Նրան նախորդել ու հաջորդել էին Կանադայում ՀՀ դեսպանի եւ Հայ դատի Կանադայի հանձնախմբի հերթական հանդիպումները արտգործնախարարի հետ»:

ԱՆՀԱՅՏ ԾԱԳՄԱՆ ԾԽԱԽՈՏ

Տեւական ժամանակ ահազանգ է ստացվում, որ հատկապես գյուղական վայրերում լայն տարածում է ստացել անհայտ ծագման ծխախոտների վաճառքը: Ներկայացված լուսանկարներում երեւում է երկու տեսակի տուփ, որոնց վրա չկա մակնշում: Մեզ փոխանցում են, որ մեկ տուփը գնում են 250 դրամով, ինչը սոցիալական ոչ բարվոք պայմաններում ապրող մարդու դեպքում շատ հարմար գին է, իսկ, ահա, պետությունն այս ամենից հսկայական վնասներ է կրում՝ չվճարված հարկերի ու անհայտ ծագման արտադրանքի հանրային վտանգավորության տեսանկյունից: Հարկային մասով մեզ փոխանցում են, որ մեկ տուփ ծխախոտի արտադրության մեջ 350-400 դրամը կազմում են հարկերը: Պատկան մարմինների կողմից անօրինական այս բիզնեսի շղթաները բացահայտելու վերաբերյալ հրապարակային հայտարարություն չկա, պարզ չէ նաեւ՝ արտադրվում են այստեղ, թե, օրինակ, անօրինական ճանապարհով են ներկրվում անանուն ծխախոտները:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝ ՔՊ ՓԱԿ ԺՈՂՈՎԻՑ

Ինչպես հայտնել էինք, դեկտեմբերի 16-ին Գյումրիում տեղի էր ունեցել իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության տարեվերջյան ամփոփիչ քաղաքական ժողովը:

«Ժողովուրդ» օրաթերթին որոշ մանրամասներ են հայտնի դարձել ՔՊ փակ ժողովից:

Նախ տեղեկացանք, որ ՔՊ-ականները շատ են եղել, այդ իսկ պատճառով մի քանի հյուրանոցներում են տեղեր ամրագրել: Ժողովի նախօրեին՝ դեկտեմբերի 15-ի երեկոյան, իշխանականները Գյումրու «Տիգրան Մեծ» ռեստորանում խնջույք են արել՝Նիկոլ Փաշինյանի մասնակցությամբ, իսկ ՔՊ քաղաքական ժողովը տեղի է ունեցել «Կումկումա» ռեստորանային համալիրում, որտեղ մինչ ՔՊ-ականների գալը նախապես անվտանգային միջոցառումներ են արվել, ստուգել, ժողովի ողջ ընթացքում էլ տարածքը ոստիկանների հսկողության տակ է եղել:

Ժողովը տեւել է մոտ 5-6 ժամ, իսկ օրակարգում հիմնականում արտաքին քաղաքական եւ կուսակցական հարցեր են եղել:

Կուսակցական մասով նախ ելույթ-զեկույց է ներկայացրել ՔՊ վարչության փոխնախագահ Վահագն Ալեքսանյանը, իսկ արտաքին հարցերով խոսել է արտգործնախարար Արարատ Միրզոյանը, հետո նրանք պատասխանել են ներկաների հարցերին:

ՔՊ ժողովին ամփոփիչ ելույթ է ունեցել նաեւ Նիկոլ Փաշինյանը՝ կրկնելով կուսակցաշինության վերաբերյալ հիմնական թեզերը, ինչ նախաձեռնող խմբի նիստերին:

Նիկոլ Փաշինյանը «դասախոսություն» է կարդացել իր թիմակիցների համար, որ պետք է գործել թիմային ու չշեղվել կուսակցության գաղափարախոսությունից:

Ինչպես մեր աղբյուրներն են փոխանցում, Արցախի ու արցախահայերի խնդիրների վերաբերյալ ՔՊ ժողովի ընթացքում քննարկում չի եղել:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՄՓՈՓՈՒՄ՝ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Մոսկվայում դեկտեմբերի 18-ին՝ ԱՊՀ երկրների վարչապետների հանդիպմանը, մեծ ուշադրություն կդարձվի մշակութային եւ հումանիտար համագործակցության ընդլայնմանը. այս մասին հաղորդում է «ՏԱՍՍ»-ը:

Հանդիպման արդյունքում նախատեսվում է ընդունել ԱՊՀ երկրների կառավարությունների ղեկավարների հայտարարություն, որը կամրագրի աշխատանքի առանցքային ոլորտները միջմշակութային երկխոսության խորացման, փոխըմբռնման եւ Համագործակցության երկրների մշակութային բազմազանության հանրահռչակման ուղղությամբ: ՌԴ նախարարների կաբինետում հայտնել են, որ ԱՊՀ անդամ երկրները շահագրգռված են մշակութային համատեղ միջոցառումների, մշակութային գործիչների հյուրախաղերի կազմակերպմամբ: Նրանք մտադիր են ընդլայնել կապերը հաստատությունների եւ ստեղծագործական թիմերի միջեւ. մեծ ուշադրություն է դարձվում մրցույթների, գիտաժողովների, ֆորումների եւ ԱՊՀ երկրների մշակույթի օրերի անցկացմանը: Հավելենք, որ դեկտեմբերի 18-ի հանդիպմամբ կավարտվի ԱՊՀ երկրների վարչապետների եռօրյա ծրագիրը Մոսկվայում: Առաջին միջոցառումներն անցկացվել են դեկտեմբերի 16-ին: ԱՊՀ երկրների կառավարությունների ղեկավարների խորհրդի նիստին Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում է փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը: Այս տարի Համագործակցությունում նախագահում է Ղրղզստանը: Հունվարի 1-ից նախագահի պաշտոնն անցնում է Ռուսաստանին:

ԱԶԱՏՎԵԼ Է ԱՇԽԱՏԱՆՔԻՑ

Երեւանի քաղաքապետի մամուլի քարտուղար Հայկ Կոստանյանը ֆեյսբուքյան իր էջում օրեր առաջ գրել էր, որ համայնքային ենթակայության հ. 94 մանկապարտեզում տեղի ունեցած միջադեպով պայմանավորված (խմբի դաստիարակի՝ երեխաների նկատմամբ անընդունելի վարքագիծ)՝աշխատանքից ազատվել են հ. 94 մանկապարտեզի տնօրենը, մանկապարտեզի դաստիարակը, ինչպես նաեւ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի կրթության, մշակույթի եւ սպորտի բաժնի պետը:

«Ի հավելումն ասվածի՝ տեղեկացնեմ, որ վերջերս ՀՀ ԱԱԾ աշխատակիցների՝ նախադպրոցական ուսումնական հաստատություններում իրականացված գործողությունների արդյունքում եւս 11 մանկապարտեզների տնօրեններ ազատվել են աշխատանքից: Վերը նշվածի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունն այս պահին այսքանն է»,-նշված է հրապարակման մեջ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ մանկապարտեզի ազատված տնօրեններից մեկը եղել է Արաբկիր վարչական շրջանում գտնվող հ. 25 մանկապարտեզի տնօրեն Ինգա Խաչատուրովան: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝Խաչատուրովային ազատել են աշխատանքից նրա՝ ՔՊ-ական չլինելու պատճառով: Օրեր շարունակ փորձեցինք կապ հաստատել մանկապարտեզի հետ՝ պարզելու, թե ինչ է տեղի ունեցել իրականում, եւ որքանով է տեղեկությունը համապատասխանում իրականությանը, սակայն նախ՝ մեզ պատասխանեցին, որ իրենք իրավասու չեն պատասխանել որեւէ հարցի, եւ որ այն անձը, որն իրավասու է, տեղում չէ, ապա՝ մեր զանգերը մնացին անպատասխան:

ՊԱՐՔԱԲԱՆՈՒՄ

ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՆԱԽԿԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ

«Ժողովուրդ» օրաթերթը պարբերաբար Ալավերդի համայնքի բնակիչներից դժգոհություններ է ստանում, որ Ալավերդու՝ վերջերս պաշտոնանկ արված համայնքապետ Արկադի Թամազյանը իր հեռանալուց հետո հետ է վերցրել համայնքին տրամադրված միկրոավտոբուսները:

Թամրազյանը ֆեյսբուքյան իր էջում գրում է. «Ալավերդի համայնքի սիրելի՛ բնակիչներ,

Համայնքի կառավարումն ապօրինաբար եւ բռնի զավթած վարչակազմը տարբեր խողովակներով շարունակում է մեր թիմի գործունեության մասին կեղծ լուրերի տարածումը:

Այս օրերին էլ մասնավոր ՋԼՄ-ների կողմից շահարկվում է այն ստահոդ տեղեկությունը, ըստ որի՝ «Ապրելու» հիմնադրամի կողմից ձեռք բերված եւ համայնքին տրամադրված միկրոավտոբուսները հետ են վերցվել ու տեղափոխվել են համայնքից:

Օգոստոսի 2-ին միկրոավտոբուսները մնասվել էին տեղացած ուժեղ կարկուտից, եւ հիմնադրամի ֆինանսական միջոցներով այս պահին շարունակվում է դրանց վերանորոգումը: Արտերկրից ներմուծվող գործարանային պահեստամասերի հանգամանքով պայմանավորված՝ վերանորոգումը պահանջում է որոշակի ժամանակ:

Կարեւորելով բնակիչների շահը՝վստահեցնում ենք՝վերանորոգումից հետո մենք պատրաստ ենք պայմանագիր կնքել համայնքի հետ եւ միկրոավտոբուսները հանձնել Ալավերդի համայնքին՝ ներհամայնքային տրանսպորտային ցանցում օգտագործելու պայմանով:

Անկախ ամենից՝ բացառում եմ, որ բնակիչները տուժեն որոշ պատեհապաշտների կամայական ցանկությունների պատճառով: Միկրոավտոբուսների ձեռք բերումն իրականացվել է Ալավերդու ներհամայնքային տրանսպորտային ցանցի արդիականացման նպատակով, եւ, իհարկե, այն պետք է ծառայի մեր բնակչին:

Շնորհակալ եմ վստահության համար»:

«Ժողովուրդ» օրաթերթը թեմայի վերաբերյալ պարզաբանում ստանալու համար դիմեց Արկադի Թամազյանին, վերջինս էլ ասաց, որ միկրոավտոբուսները հետ չեն վերցվել, պարզապես վերանորոգվում են. «Այդ ավտոբուսները «Ապրելու երկիր» հիմնադրամն է տրամադրել Ալավերդի համայնքին՝ի աջակցություն մեր բնակիչների. Ալավերդու համայնքապետարանը կամ կառավարությունը դրա հետ կապ չունեն: Երկրորդ՝ որեւէ մեկը չի տարել դրանք: Դրանք ի սկզբանե չեն էլ գործարկվել, որեւէ պայմանագիր կնքված չի էլ եղել: Նոր միկրոավտոբուսները կարկուտի հետեւանքով մնասվել էին, դրանից հետո՝ մինչ օրս, վերանորոգման փուլում են»,-ասաց նա: Արկադի Թամազյանը նաեւ հավելեց, որ եթե նոր համայնքապետը դիմի իրենց, ապա պատրաստ են պայմանագիր կնքել եւ միկրոավտոբուսների օգտագործման իրավունքը տալ համայնքին. «Մեր կուսակցությունն ի աջակցություն մեր ժողովրդի էր ձեռք բերել դրանք, բիրտ ուժ կիրառելով՝ կառավարումը խլել են մեր ձեռքից, հիմա էլ ասում են՝ ավտոբուսները տարել են»,-եզրափակեց մեր զրուցակիցը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՏԿԱՑՈՒՄ՝ ԱԳՆ-ԻՆ

Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ՀՀ կառավարության բյուջեից 1.690.000 դրամ է հատկացվել Արտաքին գործերի նախարարությանը:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ գումարը հատկացվել է Միավորված ազգերի կրթական, գիտական եւ մշակութային կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցիչ Քրիստիան Միշել Ստեփանի Տեր-Ստեփանյանի մահվան կապակցությամբ հուղարկավորության հետ կապված ծախսերը փոխհատուցելու նպատակով:

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ՝ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Փետրվարի 17-ին Ադրբեջանում կայանալու է արտահերթ նախագահական ընտրություն, եւ ընդդիմադիր մի շարք ուժեր որոշել են բոյկոտել՝դա բացատրելով երկրում ազատ եւ արդար ընտրություններ անցկացնելու համար պայմանների բացակայությամբ:

Դեկտեմբերի 15-ին «Նոր Ադրբեջան» կուսակցության վարչության ընդլայնված նիստում որոշում է կայացվել նախագահական ընտրություններում առաջադրել Իլհամ Ալիեւի թեկնածությունը: Նախագահի պաշտոնի համար պայքարելու մտադրություն ունի եւս 5 թեկնածու: Այսպիսով, այսօրվա դրությամբ Ադրբեջանում կայանալիք արտահերթ նախագահական ընտրությունում թեկնածուները վեցն են:

ՍԱՐՔԵՐ՝ ՇԱՐԺԱԿԱՋՄԵՐՈՒՄ

Առցանց քարտեզներում հանրային փոխադրամիջոցի տեղաշարժն ապահովելու նպատակով հատուկ սարք է տեղադրվել 448 շարժակազմում: Այս մասին նշվել է դեկտեմբերի 18-ին՝ Երեւանի քաղաքապետարանի հերթական գործակարգավարական խորհրդակցության ժամանակ:

Նշվել է, որ ավարտվել է Մուշական թաղամասի 4600մ կոյուղատարի շինարարությունը:

Կոնդ թաղամասի բնակիչների շենք-շինությունների օրինականացման եւ սեփականության վկայականների տրամադրման գործընթացի վերաբերյալ զեկուցվել է, որ այս պահին առկա է 211 դիմում:

ԿԱՐՄՐՈՒԿԻ ԹԻՎԸ

ԱՆ հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնը ներկայացրել է կարմրուկով պայմանավորված իրավիճակը Հայաստանում:

Ըստ այդմ՝ դեկտեմբերի 18-ի դրությամբ ընդհանուր լաբորատոր հաստատված դեպքերի թիվը 525 է, որից 374-ը երեխաներ են, 151-ը՝ մեծահասակ, 2 քաղաքացի հոսպիտալացված է, 350 քաղաքացի դուրս է գրվել:

ՉԱՐԱՇԱՀՈՒՄ

ՎԱՐԴԱՆ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ԳՈՐԾԸ՝ ՆՈՐ ՓՈՒԼՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ավարտվել է Գյումրու համայնքի նախկին ղեկավար Վ. Ղուկասյանի կողմից պաշտոնական կեղծիք կատարելու, պաշտոնական լիազորությունները չարաշահելու միջոցով Գյումրի համայնքում գտնվող երկու տասնյակից ավելի անշարժ գույք օտարելու դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում իրականացված բազմակողմանի քննությամբ ձեռք բերված փաստական տվյալներով՝ հիմնավորվել է, որ Վ. Ղուկասյանը, 1999թ. նոյեմբերից մինչեւ 2012թ. հոկտեմբերը հանդիսանալով Գյումրու քաղաքային համայնքի ղեկավար, մի շարք պաշտոնատար անձանց օժանդակությամբ 2006-2011թթ. ընթացքում ուղղակի վաճառքով կամ աճուրդով օտարել է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ օտարման ոչ ենթակա՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող, տարբեր հասցեներում գտնվող 24 անշարժ գույք, այդ թվում՝ ընդհանուր օգտագործման կանաչ գոտի (զբոսայգի) հանդիսացող քաղաքային զբոսայգու հողամասեր՝ տվյալ ժամանակ գնահատված ընդհանուր 35.690.403 (35 միլիոն 690 հազար 403) ՀՀ դրամ կադաստրային արժեքով:

Հիշյալ անշարժ գույքերն օտարվելուց հետո կեղծ բովանդակությամբ տեղեկանքներ են ներկայացվել ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի Շիրակի մարզային ստորաբաժանում, եւ դրանց հիման վրա՝ հիշյալ անշարժ գույքերի նկատմամբ գրանցվել է տարբեր ՍՊԸ-ների եւ անձանց սեփականության իրավունքը:

Բացի այդ, ձեւական առուվաճառքի եւ անհատույց օգտագործման պայմանագրեր կնքելու, նվիրատվություններ կատարելու եղանակով օրինական ճանապարհով գույքի ձեռք բերման պատրանք ստեղծելու, այդկերպ իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից խուսափելուն օժանդակելու հարցերի շուրջ նախնական համաձայնության գալով մի շարք անձանց, այդ թվում՝ եղբոր եւ որդու հետ, Գյումրի համայնքից հանցավոր եղանակով ստացված գույքի ծագման աղբյուրը խեղաթյուրելու, պատկանելիությունը թաքցնելու նպատակով օրինականացրել է վերը նշված հանցավոր ճանապարհով ստացված անշարժ գույքերից 4-ը՝ 16.060.815 ՀՀ դրամ (16 միլիոն 60 հազար 815) կադաստրային արժեքով:

Մասնավորապես՝ Վարդան Ղուկասյանի մտերիմների միջեւ կնքվել են անշարժ գույքն օտարելու վերաբերյալ ձեւական առուվաճառքի պայմանագրեր, որոնց հիմքով գույքերի նկատմամբ գրանցվել է նրանց սեփականության իրավունքը: Այնուհետեւ, հիշյալ գույքերն անհատույց օգտագործման նպատակով Վ. Ղուկասյանին հանձնելու վերաբերյալ կնքված պայմանագրերի հիմքով, կատարվել է պետական գրանցում, իսկ դրանից հետո կնքված նվիրատվության պայմանագրերի համաձայն՝ գույքերը նվիրվել են Վ. Ղուկասյանի որդուն կամ եղբորը: Այդ հիմքով կատարվել են պետական գրանցումներ, տրամադրվել են վկայականներ:

Հավելենք, որ ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ Գյումրու համայնքի նախկին ղեկավար Վ. Ղուկասյանին մեղադրանք է ներկայացվել՝ պաշտոնական կեղծիք կատարելու (24 դրվագ), պաշտոնական լիազորությունները չարաշահելու (26 դրվագ), հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու (փողերի լվացում) (4 դրվագ) համար: Վերջինիս եղբորը, որդուն եւ երկու մտերիմներին մեղադրանք է ներկայացվել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու (փողերի լվացում) համար:

Քրեական վարույթով համայնքապետարանի նախկին պաշտոնատար 5 անձանց նկատմամբ ոչ արդարացնող՝ վաղեմությունն անցնելու հիմքերով քրեական հետապնդումները դադարեցվել են:

ԱՆՈՒՆՆԵՐ

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՎԱԾ ԳԵՐԻՆԵՐԸ



Դեկտեմբերի 13-ին 2020-2023 թվականներին գերեվարված Հայաստանի Հանրապետության 31 զինծառայողներ եւ սեպտեմբերին Արցախի Հանրապետությունում գերեվարված 1 զինծառայող հատել են հայ-ադրբեջանական սահմանը եւ գտնվում են Հայաստանում: Անդրանիկ Սրապի Սուքիասյանի դատավարությունն ընթացել էր Բաքվի վերաքննիչ դատարանում: Նրան մեղադրանք էր առաջադրվել 318.2-րդ հոդվածով, այն է՝ «խմբի կազմում նախնական համաձայնությամբ Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանն ապօրինի հատելը», եւ 228.3-րդ հոդվածով՝ «կազմակերպված խմբի կողմից զենքի, դրանց բաղադրամասերի, զինամթերքի, պայթուցիկ նյութերի եւ պայթուցիկ սարքերի ապօրինի ձեռք բերում, փոխանցում, վաճառք, պահպանում, փոխադրում կամ կրում»: Մեղադրանքի համար դատարանի դատախազը նրան դատապարտել էր 7 տարվա ազատազրկման, սակայն իբրեւ դատավորը պահանջը չի բավարարել եւ 6 տարվա ազատազրկման է դատապարտել: Ըստ դատավորի կայացրած որոշման՝ Անդրանիկ Սուքիասյանը եւ նրա հետ գերեվարվածները պատիժը կրելուց հետո պետք է լքեին Ադրբեջանի տարածքը: Անդրանիկ Սուքիասյանը ծննդով Շիրակ մարզի Գյումրի քաղաքից էր:

Տիգրան Մանուկի Ավագյանի դատավարությունն ընթացել էր Բաքվի վերաքննիչ դատարանում: Նրան մեղադրանք էր առաջադրվել 318.2-րդ հոդվածով, այն է՝ «խմբի կազմում նախնական համաձայնությամբ Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանն ապօրինի հատելը», եւ 228.3-րդ հոդվածով՝ «կազմակերպված խմբի կողմից զենքի, դրանց բաղադրամասերի, զինամթերքի, պայթուցիկ նյութերի եւ պայթուցիկ սարքերի ապօրինի ձեռք բերում, փոխանցում, վաճառք, պահպանում, փոխադրում կամ կրում»: Մեղադրանքի համար դատարանի դատախազը նրան դատապարտել էր 7 տարվա ազատազրկման, սակայն իբրեւ դատավորը պահանջը չի բավարարել եւ 6 տարվա ազատազրկման է դատապարտել: Ըստ դատավորի կայացրած որոշման՝ Տիգրան Ավագյանը պատիժը կրելուց հետո պետք է լքեր Ադրբեջանը: Տիգրան Ավագյանը ծննդով Շիրակ մարզի Գյումրի քաղաքից էր:

ՆԱՆԻԿ ՂԱՍՍՅԱՆ

ԿԱՐԵՎՈՐ

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ Է ՀԱԲՈՒՅՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ դատախազը 2023 թվականի դեկտեմբերի 16-ին հանրային քրեական հետապնդում է հարուցել «Էլ-Ար Շինե» ընկերության տնօրեն Ա.Ա.-ի նկատմամբ, առանց ընդերքն օգտագործելու թույլտվության, Մասիս համայնքի Սիփանիկ բնակավայրի 3-րդ հասցեում գտնվող հողատարածքում պետական սեփականություն հանդիսացող ավազ արդյունահանելու համար:

Դատախազությունից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ Արարատի մարզային վարչության Մասիսի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերլիազորի զեկուցագրի հիման վրա նախաձեռնված քրեական վարույթով պարզվել է, որ Ա.Ա.-ն, հանդիսանալով «Էլ-Ար Շինե» ընկերության տնօրեն, 2023 թվականի դեկտեմբերի 1-ից մինչեւ դեկտեմբերի 14-ն ընկած ժամանակահատվածում Մասիս համայնքի Սիփանիկ բնակավայրի 3-րդ հասցեում գտնվող հողատարածքում, առանց հատուկ թույլտվության եւ առանց լիցենզիայի, վերոնշյալ ժամանակահատվածում հատուկ տեսակի տեխնիկայի օգտագործմամբ Ս.Մ.-ի, Լ.Պ.-ի եւ Զ.Ս.-ի օժանդակությամբ արդյունահանել է պետական սեփականություն հանդիսացող՝ մոտ 350 խմ ծավալով օգտակար հանածո՝ ավազ: Ա.Ա.-ն արդյունահանված ավազի 1 խմ-ն 9000 դրամով, իսկ ընդհանուր՝ 3 մլն 150 հազար դրամով իրացրել է տարբեր անձանց՝ պետությանը չվճարելով 5 մլն դրամը գերազանցող պետական տուրքերը:

Վերոնշյալ արարքների արդյունքում պետությանը, նախնական հաշվարկով, պատճառվել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս՝ մոտ 5 մլն 500 հազար դրամի չափով:

2023 թվականի դեկտեմբերի 16-ին «Էլ-Ար Շինե» ՍՊ ընկերության կողմից վերականգնվել է պետությանը պատճառված 5 մլն 500 հազար դրամ վնասը:

ԿԱՊԿՊԵԼ Է, ԹԱԼԱՆԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ երեկ գիշերը՝ ժամը 4:00-ի սահմաններում, Լոռու մարզում ենթադրյալ հանցագործները մտել են բնակիչներից մեկի տուն ու գողություն կատարել: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ նրանք եղել են 4 անձ, որոնք եղել են դիմակավորված: Ըստ մեզ հասած լուրերի՝ կպչուն ժապավենով կապել են մորն ու որդուն ու սկսել տակնուվրա անել տունը:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ տնից տարել են ոսկի, գումար եւ հեռացել: Ավելին՝ լուրեր ունենք, որ տանտերերը մարմնական վնասվածք չունեն, իրավապահները փնտրում են կատարողին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 15-ից 18-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 139 դեպք, որոնցից 7-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ Է ԹԱՔՑՆՈՒՄ

Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայ Ղալումյանին դեկտեմբերի 12-ին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկատվական հարցում է ուղարկել՝ նրան հարցնելով. «Արցախից բռնագաղթած, Տավուշի մարզի 52 հյուրանոցներում ու հյուրատներում բնակվածների հյուրանոցային ծախսերը կազմել են 218.0 մլն դրամ. խնդրում եմ նշել այդ 52 հյուրանոցների ու հյուրատների անունները, դրանցից յուրաքանչյուրի տրված գումարի չափը»:

Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակիչներից 1100 մարդ ժամանակավորապես բնակեցվել են մարզի 52 հյուրանոց-հյուրատներում, որոնց կեցության ծախսերը կազմել են 218.0 մլն դրամ»: Ուշագրավ է, որ մարզպետը Նիկոլ Փաշինյանի նման, Արցախի փոխարեն, «Լեռնային Ղարաբաղ» եզրույթն է օգտագործել:

Մարզպետ Ղալումյանը ի՞նչ պատճառներ, շահագրգռվածություն ունի թաքցնելու արցախցիներին հյուրընկալած հյուրանոցների եւ հյուրատների ցանկը եւ նրանց պետբյուջեից տրված գումարների չափը: Սա առաջին դեպքը չէ, երբ մարզպետ Ղալումյանը տեղեկատվություն է թաքցնում: Նրան 3 անգամ տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝ հարցնելով, թե որքան է մարզում գործող փայտածուխի արտադրամասերի թիվը, սակայն ամեն անգամ մարզպետը չի հայտնել դրանց թիվը այն կեղծ, հնարովի պատճառաբանությամբ, թե դրանց թիվն ամեն օր փոխվում է:

Մարզպետը այդ հարցին չի պատասխանել նույնիսկ այն դեպքում, երբ կոնկրետ օրվա կոնկրետ ժամի դրությամբ եմ հարցրել մարզում փայտածուխի արտադրամասերի թիվը:

2,5 ՀԱԶԱՐ ՀԵԿՏԱՐ ԱՇՆԱՆԱՑԱՆ

Տավուշի մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը, ըստ հողային հաշվեկշռի, կազմում են 110 665,6 հեկտար, որից վարելահող՝ 25 485,3 հեկտար, բազմամյա տնկարկներ՝ 1981,8 հեկտար, այդ թվում՝ խաղողի այգիներ՝ 1195,3 հեկտար, պտղատու այգիներ՝ 786,5 հեկտար, խոտհարքներ՝ 9400,6 հեկտար, արոտավայրեր՝ 63 006 հեկտար,այլ՝ 10791,8 հեկտար:

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկատվական հարցում է ուղարկել՝ պարզելու, թե այս տարի մարզում որքան աշնանացան է արվել:

Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «Իջեւանի, Նոյեմբերյանի եւ Բերդի համայնքապետարանների կողմից տրամադրված տեղեկատվությունների օպերատիվ տվյալներով՝ 12.12.2023թ. դրությամբ մարզում կատարվել է 2550,2 հա աշնանացան, որից ցորեն՝ 1938,4հա, գարի՝ 611,8հա: 2023թ. աշնանացան ցորենի արտադրության խթանման պետական աջակցության ծրագիր չի գործում»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՍՑԵՆԵՐ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՄԱՔՍԱՔԵՐԾՈՒՄԸ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Հայաստանի պետական եկամուտների կոմիտեն (ՊԵԿ) տեղեկացնում է, որ ժամանակավոր ներմուծված՝ ԱՏԳ ԱԱ 8703 աղրանքային դիրքին դասվող թեթեւ մարդատար տրանսպորտային միջոցները պետական աջակցության ծրագրի շրջանակում, դեկտեմբերի 18-ից սկսած, հնարավոր կլինի մաքսազերծել նաեւ մայրաքաղաք Երեւանի մաքսային սպասարկման կենտրոն մաքսատուն-վարչությունում, Վանաձոր քաղաքի Արեւելյան մաքսատուն-վարչությունում եւ Սիսիան քաղաքի Հարավային մաքսատուն-վարչությունում:

Հավելենք, որ ՊԵԿ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի հաղորդագրության համաձայն՝ Երեւանի Իսակովի 10 հասցեում մաքսային ձեւակերպման ներկայանալուց առաջ անհրաժեշտ է տրանսպորտային միջոցը նախապես տեղակայել մաքսային հսկողության հետեւյալ գոտիներից մեկում՝ «Ապավեն Տերմինալ» ՓԲԸ, Երեւան, Արարատյան 43 կամ Արարատյան 95, «Վալենսիա» Հ/Ձ ՍՊԸ, Երեւան, Շիրակի փողոց 43:

ՊԵԿ-ը հիշեցնում է, որ, կառավարության նոյեմբերի 30-ի որոշմամբ, նախատեսվել է միասնական դրույքաչափով վճարվող մաքսատուրքերի եւ հարկերի մասնակի փոխհատուցում տալ Հայաստանի կամ Եվրասիական տնտեսական միության անդամ այլ երկրների այն քաղաքացիներին, որոնք մինչեւ դեկտեմբերի 4-ը ներառյալ ժամանակավոր ներմուծման նպատակով երրորդ երկրներից ներմուծել են թեթեւ մարդատար տրանսպորտային միջոց եւ դեկտեմբերի 5-ից դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանում կմաքսազերծեն դրանք:

«Փոխհատուցումը նախատեսված է կատարել մինչեւ 5 տարի թողարկման տարեթիվ ունեցող տրանսպորտային միջոցների մասով՝ միասնական դրույքաչափով վճարման ենթակա մաքսատուրքերի եւ հարկերի 40 տոկոսի չափով, իսկ 5 տարուց ավելի թողարկման տարեթիվ ունեցող տրանսպորտային միջոցների մասով՝ 70 տոկոսի չափով: [...] Շահառուները մաքսային ձեւակերպման ժամանակ վճարելու են մինչեւ 5 տարի թողարկման տարեթիվ ունեցող տրանսպորտային միջոցների մասով՝ միասնական դրույքաչափով վճարման ենթակա մաքսատուրքերի եւ հարկերի 60 տոկոսը, 5 տարուց ավելի թողարկման տարեթիվ ունեցող տրանսպորտային միջոցների մասով՝ 30 տոկոսը, իսկ մնացած բեռը, ըստ էության, կրելու է պետությունը»,- ասված է հաղորդագրության մեջ:

Հիշեցնենք՝ կառավարության որոշմամբ՝ 2024թ.-ի հունվարի 1-ից Հայաստանում շահագործվող վրացական գրանցումով ավտոմեքենաներից գանձվելու են օրենքով նախատեսված բոլոր վճարները՝ մաքսատուրք, ավելացված արժեքի հարկ, բնապահպանական հարկ ու գույքահարկ: Վրաստան վերադառնալու դեպքում ժամանակավոր ներմուծման ընթացակարգով Հայաստանում շահագործվող ավտոմեքենաների սեփականատերերը կատարած բոլոր վճարումները հետ են ստանալու:

ՏՎՅԱԼՆԵՐ

ԾՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ՀՀ-ում ավելի շատ տղաներ են ծնվում, քան աղջիկներ:

Հայաստանի Հանրապետությունում վերջին 10 տարիների ընթացքում նվազել է աղջիկ երեխաների ծնելիության թիվը, սակայն աղջիկների համեմատ՝ ավելացել է տղա երեխաների ծնելիությունը. վերջին 10 տարիների ընթացքում միշտ այդպես է եղել:

2012 թվականին աղջիկ երեխաների ծնելիությունը կազմել է 19 հազար 737 երեխա, տղա երեխաների ծնելիությունը՝ 22 743:

Եթե համեմատենք երեխաների ծնելիության թիվը ըստ սեռերի, ապա կարող ենք ասել, որ այն զգալիորեն նվազել է:

Բացատրենք՝ ինչպես.

2012 թվականին ծնվել է 19 737 աղջիկ երեխա, 2022 թվականին 17 հազար 139 աղջիկ երեխա: Աղջիկ երեխաների ծնելիությունը, 2012 թվականի համեմատ, նվազել է գրեթե 2 հազարով:

2012 թվականին ծնվել է 22 հազար 743 տղա երեխա, իսկ 2022 թվականին՝ 19 հազար 236 երեխա: Տղա երեխաների ծնելիությունը, 2012 թվականի համեմատ, նվազել է գրեթե 3 հազարով:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄԸ

Հանրապետությունում Երեւան քաղաքի քաղաքային բնակչությունը գերազանցում է մարզային բնակչությանը:

Ըստ Վիճակագրական կոմիտեի հրապարակումների՝ Երեւան քաղաքում բնակվում է ՀՀ 2 մլն 977 հազար 130 մարդուց գրեթե կեսից մի փոքր քիչը՝ 1 մլն 98 հազարը:

Բնակչության թվով առաջին մարզը Արմավիրի մարզն է՝ 266 հազար 656 մարդ, իսկ վերջին տեղում Վայոց ձորի մարզն է՝ 47 հազար 661 մարդ բնակչությամբ:

Վերջին 10 տարվա ընթացքում ՀՀ բնակչությունը նվազել է 49 հազար 749-ով:

2013 թվականի հունվարի 1-ին ՀՀ բնակչությունը կազմել է 3 մլն 026 հազար 879 մարդ: 10 տարի անց նվազելով մոտ 50 հազար հոգով՝ ՀՀ բնակչությունը կազմել է 2 մլն 977 հազար 130 մարդ:

Ըստ Վիճակագրական կոմիտեի՝ պատճառը արտագաղթն է կամ տարբեր պատճառներով մահացության թվի աճը:

Հայաստանի Հանրապետությունում բնակչության թվաքանակի ցուցանիշները, 90-ականներից սկսած, շարունակաբար նվազել են՝ բացառությամբ 2012-2013 թվականների:

Սա պայմանավորված է եղել բնակչության ծնելիության մակարդակի նվազումով եւ արտագաղթի տեմպի աճով:

2022 թվականին արձանագրված բնակչության բնական հավելաճի եւ միգրացիայի դրական մնացորդի ցուցանիշների արդյունքում տարեվերջի դրությամբ մշտական բնակչության թվաքանակը, նախորդ տարվա համեմատ, աճել է 15.7 հազար մարդով եւ կազմել 2 մլն 977 հազար մարդ:

Սրանից կարելի է ենթադրել, որ 80+ տարիքային շեմը սկսել են հաղթահարել ավելի շատ մարդիկ, սակայն հաջորդիվ կներկայացնենք՝ ինչպես է մահը երիտասարդացել:

Ստացվում է, որ ՀՀ մշտական բնակվողները 30-34 եւ 35-39 տարեկան կանայք եւ տղամարդիկ են:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 44 ճՏՊ. 79 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԱՆՑՈՒԴԱՐՁ

Wildberries–Ը՝ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ

Wildberries-ը մուտք է գործել չինական շուկա. այս մասին տեղեկացնում է РБК-ն: Wildberries հիմնադիր եւ սեփականատեր Տատյանա Բակալչուկը հայտնել է, որ սկսում են աշխատել Չինաստանից արտադրողների եւ վաճառողների հետ: Նրանք ուղղակիորեն իրենց արտադրանքը կմատակարարեն Wildberries-ի հարթակ բոլոր երկրներում, որտեղ ներկայացված են: Տատյանա Բակալչուկը հավելել է, որ ռուսական բիզնեսը մնում է առաջնահերթություն, եւ չինական շուկա դուրս գալը որեւէ կերպ չի ազդի ռուսական շուկայի վրա: Արտասահմանում ընկերության գործունեությունից ստացվում է ընդհանուր շրջանառության մոտ 10%-ը, մնացածը ստացվում է Ռուսաստանից:

Դեռ ամռանը հաղորդվում էր, որ Wildberries-ը պատրաստվում է մուտք գործել չինական շուկա: Ընկերությունը հայտեր է ներկայացրել Սինգապուրում, Թաիլանդում, Հնդկաստանում, Ճապոնիայում, Վիետնամում, Մալայզիայում, Ինդոնեզիայում, Ֆիլիպիններում, Մոնղոլիայում, Աֆղանստանում եւ Հյուսիսային Կորեայում: Այս պահին Wildberries-ը գործում է Ռուսաստանում, Բելառուսում, Հայաստանում, Ղազախստանում, Ուզբեկստանում, Ղրղզստանում, Իսրայելում եւ Ադրբեջանում: Նախկինում ընկերությունը գործում էր նաեւ ԱՄՆ-ում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Իտալիայում եւ Իսպանիայում, սակայն 2022-ի փետրվարից այն դուրս է եկել այդ երկրներից: Wildberries-ը Ռուսաստանում առցանց առեւտրի ամենամեծ շուկան է: Այս տարվա առաջին կիսամյակում ապրանքների եւ ծառայությունների վաճառքից շրջանառությունն աճել է գրեթե 100%-ով եւ կազմել 1,22 տրիլիոն ռուբլի:

ԹՌԻՉՔՆԵՐ՝ ԱՄԱՆՈՐԻՆ

Ամանորին ընդառաջ՝ «Ժողովուրդ» օրաթերթը կազմել է փոքրիկ սանդղակ, թե որքան են կազմում դեպի Ռուսաստան եւ Արաբական Միացիալ Էմիրություններ տոմսերի արժեքները:

Հայկական FlyArna ավիաընկերությունում Ամանորի նախաշեմին մեկնման տոմսերի արժեքը կսկսվի 56 հազար դրամից, որը իր մեջ ներառում է միայն 10 կիլոգրամ ձեռքի ուղեբեռ: Ավիաընկերությունում ուղեբեռ ունենալու եւ ավիաընկերության բոլոր ծառայություններից օգտվելու դեպքում տոմսի արժեքը կհատի 100 հազար դրամի շեմը: FlyArna ավիաընկերությունը դեկտեմբերի 31-ին թռիչքներ չի իրականացնի:

Դեպի Դուբայ՝ Արաբական Միացիալ Էմիրություններ, տոմսերի արժեքը Ամանորի նախաշեմին կսկսի 125 հազար դրամից, որն իր մեջ չի ներառի ոչինչ, բացի 10 կգ ուղեբեռից: Եթե ցանկանաք օգտվել ավիաընկերությունում ուղեբեռ ունենալու հնարավորությունից եւ ավիաընկերության բոլոր ծառայություններից, ապա ավիատոմսերի արժեքը կսկսվի 150 հազար դրամից եւ կկազմի ավելին:

AirArabic ավիաընկերությունում Ամանորի նախաշեմին արդեն իսկ սպառվել են դեկտեմբերի 22,23,25,26,29 եւ 30-ի չվերթների համար նախատեսված տոմսերը:

ԾՐԱԳՐԵՐ

Forbes–Ը՝ ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ «Ինչի՞ վրա է ծախսել գումարներն ահաբեկչության ֆինանսավորման մեջ մեղադրվող Ռուբեն Վարդանյանը» վերնագրով հոդվածում Forbes-ն անդրադարձել է Ռուբեն Վարդանյանի՝ Հայաստանում իրականացված ծրագրերին: «Ադրբեջանը Ռուբեն Վարդանյանին մեղադրում է ահաբեկչության ֆինասավորման, ադօրինի զինված խմբավորումների ստեղծման եւ սահմանն ադօրինի հատելու համար: Forbes-ը ներկայացնում է այն հիմնական ծրագրերը, որոնց ուղղությամբ գումարներ է ծախսել Ռուբեն Վարդանյանը»,-գրում է ղարբերականը՝ այդպիսով ցույց տալով, որ Վարդանյանի նախաձեռնությամբ իրականացված ծրագրերը ոչ մի հեռավոր կապ անգամ չունեն ահաբեկչության ֆինանսավորման հետ:

Հրապարակման մեջ ներկայացվել են Ռուբեն Վարդանյանի կողմից իրականացված խոշոր կրթական, զբոսաշրջային եւ ենթակառուցվածքային, մարդասիրական, ինչպես նաեւ սոցիալական ծրագրերը, մասնավորապես՝ «Տաթեւի վերածնունդ»-ը, Դիլիջանի միջազգային դպրոցի (UWC Dilijan) ծրագիրը, «Ավրորա» մարդասիրական նախաձեռնությունը:

Նշվում է, որ Ռուբեն Վարդանյանի ընտանիքի եւ նրա գործընկերների կողմից 2001-2023թթ. շուրջ 700 մլն դոլարի ներդում է իրականացվել Հայաստանում, Արցախում եւ հայկական աշխարհում: Տնտեսական զարգացման ոլորտում իրականացված ներդրումներից բացի, մոտ 430 մլն դոլար ուղղվել է կրթական ծրագրերին (202 մլն դոլար), մարդասիրական նախաձեռնություններին (68 մլն դոլար), մշակույթի եւ պատմամշակութային ժառանգութան պահպանան ծրագրերին (20 մլն դոլար), զբոսաշրջային ծրագրերի միջոցով տարածքների զարգացման եւ ենթակառուցվածքային ծրագրերին (108 մլն դոլար), գիտության եւ տեխնոլոգիաների, առաջապահության եւ ագրոէկոլոգիական նախագծերին (13 մլն դոլար):

Հոդվածում ներկայացվում է նաեւ խոշոր ծրագրերի ազդեցությունը:

Նշվում է, որ UWC Dilijan-ը, որը «Միացյալ համաշխարհային քոլեջներ - UWC» ցանցի անդամ է, արդեն 820 շրջանավարտ է տվել: 160 հայ պատանիներ ու աղջիկներ դպրոցի՝ UWC անդամակցության շնորհիվ միջազգային կրթություն ստանալու հնարավորություն են ունեցել: Ուսանողների 74%-ը իրենց ուսման համար մասնակի կամ ամբողջական դրամաշնորհ են ստացել: 2016 թվականին Դիլիջանն ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ուսումնառու քաղաքների համաշխարհային ցանցում:

Անդրադառնալով «Տաթեւի վերածնունդ»-ին՝ նշվում է, որ նրա հիմնական նպատակը զբոսաշրջային ծրագրերի միջոցով տեղի բնակչության կյանքի որակի բարելավումն էր: Հիմա արդեն Հայաստան այցելող յուրաքանչյուր 5-րդ զբոսաշրջիկ իր ծրագրում ընդգրկում է ճոպանուղին:

«Ավրորա» միաջազգային մարդասիրական նախաձեռնության շրջանակում աջակցություն է ցուցաբերվել 427 նախագծի (ավելի քան 3,2 մլն մարդ): Պարբերականը նշում է, որ նախաձեռնությունը ստեղծվել է Հայոց ցեղասպանությունը վերապրողների անունից՝ի երախտագիտություն նրանց փրկողների: «Ավրորա» դրամաշնորհներն աջակցում են կրթական, մարդասիրական նախագծերին, պահպանում հայկական ժառանգությունը՝ հարգելով Հայոց ցեղասպանությունը վերապրածներին փրկողների հիշատակը:

Պարբերականն անդրադարձել է նաեւ դեռ 2008 թվականից Ռուբեն Վարդանյանի կողմից Արցախում իականացված սոցիալական, բարեգործական, մշակութային ժառանգության պահպանման ծրագրերին՝ նշելով, որ ընդհանուր ներդրումները կազմել են շուրջ 8 մլն դոլար:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

- Կոտայքի մարզ, համայնք Նոր Հաճն, Նոր Հաճն ք., Ե. Չարենցի փողոց, 19 շենք, 42 հասցեում գտնվող 79,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 22000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 04.01.2024թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝01.07.2024թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթը եւ աճուրդի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքեր:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՇԱՆՈԹԱՑԵԼ Է

ԱՐԱՍ ՕԶԲԻԼԻԶՆ ԱՅՑԵԼԵԼ Է ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահի թեկնածու, Հայաստանի ազգային հավաքականի նախկին խաղացող Արաս Օզբիլիզն այցելել է Գեղարքունիքի մարզ, ծանոթացել մարզային ենթակառուցվածքներին:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Հայրիվանքում, Նորատուսում, Գեղարքունիքում, Լիճքում, Երանոսում, Կարմիրգյուղում եւ Մարտունի քաղաքում Օզբիլիզը շփվել է երեխաների, ծնողների եւ ուսուցիչների հետ, լսել նրանց առաջարկներն ու դժգոհությունները:

«Մարզային ֆուտբոլում խնդիրները շատ են, եւ դրանց լուծման համար համակարգային փոփոխություններ են պետք: Պատրաստ եմ միջազգային փորձը Հայաստանում կիրառել, այնպես անել, որ առաջիկա տարիներին արդյունքը տեսանելի լինի: Այս այցերն ինձ համար շատ կարեւոր են՝ հասկանալու այն խնդիրները, որոնց պատճառով մարզերում ֆուտբոլը չի զարգանում»,- նշել է ՀՖՖ նախագահի թեկնածուն:

Հայրավանք գյուղում Արաս Օզբիլիզը երեխաների հետ նաեւ կարճ պարապմունք է անցկացրել: Օզբիլիզը նշել է, որ գյուղերում տաղանդավոր եւ աչքաբաց երեխաներ են մեծանում, եւ եթե համակարգված մարզումներ լինեն, առաջնություններ անցկացվեն, ֆուտբոլն այդ երեխաների առօրյայի անբաժանելի մասը կդառնա:

Օզբիլիզի հետ հանդիպման ժամանակ Նորատուսի բնակիչները ներկայացրել են իրավիճակը, ասել, որ մի քանի տարի առաջ շահագործված մարզադաշտը կահավորված չէ ստանդարտներին համապատասխան, ճաղավանդակներն այնքան ցածր են, որ գնդակը հաճախ սեփական տների բակեր է հասնում, ապակի կոտրում:

«Հիմնական խնդիրը կապված է ճաղավանդակների հետ: Գնդակներն այս ու այն կողմ ուղարկելով՝ երեխաները հարեւաններին մեծ վնաս են տալիս: Շատ ցանկալի կլիներ՝ այն բարձրացնեին, մյուս կողմից՝ եթե գյուղում մարզիչ լիներ, գուցե երեխաները ֆուտբոլում մեծ հաջողություններ ունենային»,- նշել է Նորատուսի բնակիչ Վահան Կոկոյանը:

Գեղարքունիքի մարզի՝ ֆուտբոլային ենթակառուցվածքներ ունեցող գրեթե բոլոր գյուղերում Արաս Օզբիլիզը նույն խնդիրն է արձանագրել. մինի մարզադաշտերը կառուցվել են տարբեր խախտումներով, շահագործումից հետո չեն սպասարկվել, արդյունքում հայտնվել են անմխիթար վիճակում: Մյուս կողմից՝ համակարգված մարզումների բացակայության պայմաններում երեխաները մարզադաշտերն օգտագործում են այլ նպատակներով, ֆուտբոլ էլ խաղում են սիրողական մակարդակում՝ իրենց առջեւ չունենալով նպատակ մասնակցելու առաջնությունների:

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահի թեկնածուն շարունակելու է մարզային այցերը: Հանուն ֆուտբոլային Հայաստանի՝ Արաս Օզբիլիզը խոստացել է ջանք ու եռանդ չխնայել, համակարգային խնդիրներն ուսումնասիրել, առաջարկել դրանց լուծման ուղիներն ու նաեւ դրանով նպաստել հայկական ֆուտբոլի զարգացմանը:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆ ԳԻՐԱՑԵԼ Է ԴԵՂԵՐԻՑ

Դերասանուհի, բլոգգեր Լիանա Վանոյանը, որը հանդիսատեսին հայտնի դարձավ մի շարք սիթքոմներից եւ ինստագրամյան իր էջում հրապարակված հումորային հոլովակներից, վերջին շրջանում սոցիալական ցանցի իր էջերում պարբերաբար կիսվում է ավելորդ քաշի խնդիրը հաղթահարելու իր ուղու մասին:

Լիանան հրապարակել է արխիվային կադրեր. «Սա արխիվ է. նկարել եմ 2017 թվականին: Այստեղ դեռ չէր սկսվել առողջական խնդիրների շքերթը, ու ես նորմալ քաշի մեջ էի...

Բայց սկսվեց. սկզբում շատ չէի զգում, հետո արդեն ամեն օր ավելի էր խորանում ամեն բան երկու տարվա մեջ, ես ավելացրել էի քաշս մոտ 18 կգ-ով, ու սկսվեց ամեն ամիս ավելանալ: Հասա մաքսիմալի՝68 կգ-ից 100 կգ էի, ու արդեն համակերպվել էի...

Ես սկսեցի ընդունել, սիրել, 100 կգ-ով ես ամեն դեպքում կարծում էի, թե չեմ կարողանալու իմ նախկին քաշին գալ: Այո, բարդ էր, ոտքերս շատ էին ցավում, մեջքս:

Բարեկամների քոմենթներ. «Չաղացել ես շատ»: Մի օր էլ մեկը պատահաբար ինձ էր ուղարկել իր կարծիքը՝ իմ արտաքինի հետ կապված, որը պիտի ուրիշին ուղարկեր... Կարդացի, շատ նեղվեցի, լաց եղա. չէ՞ որ դա իմ արտաքինն էր, ես էի տանջվում էդ ավելորդ քաշից, իրենց ի՞նչ վնաս:

Ախր, դուք երբեք չեք իմանա դիմացինի խնդիրը, կարող են նեղվել, կոտրվել, ամաչել, փակվել... Ջգո՛ւյշ եղեք արտահայտվելիս:

Երբ շատ էի աշխատում, սկսվեց անտանելի օրեր, ես զգում էի՝ մի բան այն չէր, դեղերս խմում էի, բայց էլի շատ վատ էի: Ես օրեր ունեցա, երբ բեմում կանգնած աղոթում էի, որ չվատանամ, չընկնեմ. դա շատ բարդ շրջան էր, եւ երեւի հենց այդ շրջանը բերեց ինքս իմ մասին հոգ տանելու լուրջ քայլին»:

Հրապարակելով իր լուսանկարն այն ժամանակահատվածից, երբ ամենաբարձր քաշն է ունեցել, Լիանան գրել է.

«Այստեղ արդեն 110 կգ էի, ու արդեն գլխումս բան էր սկսվել՝ վերջացնել պատմությունը ու սկսել նորից նոր էջ, որտեղ ես առողջ եմ»:

Լիանայի խոսքով՝ որոշ ժամանակ առաջ ունեցել է առողջական խնդիր՝ վահանաձեւ գեղձի ֆունկցիայի խանգարում, որի արդյունքում բուժման կուրսեր է անցել: Բժշկի մեղավորությամբ քաշ է հավաքել. պատճառը սխալ նշանակված դեղերն են եղել: Ապա, ինչպես դերասանուհին է շեշտում, «նեղանալով աշխարհից»՝ իրեն բաց է թողել եւ սկսել սնվել անկանոն, ինչի արդյունքում կրկնակի քաշ է հավաքել, սակայն հասկանալով, որ իրեն վատ է զգում՝ որոշել է հստակ քայլեր անել այդ ուղղությամբ:

Այժմ Լիանան քիչ-քիչ վերադառնում է հին քաշին:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԿՏԵՂԱՓՈԽՎԻ «ԱՐՍԵՆԱԼ»

Իտալիայի չեմպիոն «Նապոլիի» 24-ամյա նիգերիացի հարձակվող Վիկտոր Օսիմենը հաջորդ ամռանը կտեղափոխվի Լոնդոնի «Արսենալ». հաղորդում է MoArsenal86-ը:

2023թ. Աֆրիկայի լավագույն ֆուտբոլիստի տրանսֆերի արժեքը կկազմի 120-130 միլիոն եվրո:

Առաջիկայում նեապոլյան ակումբը կերկարաձգի պայմանագիրը Օսիմենի հետ, եւ հրաժարագինը կսահմանվի 130 միլիոն եվրո:

Մադրիդի «Ռեալը» եւս դիտարկում է Օսիմենին ձեռք բերելու տարբերակը, եթե չկարողանա պայմանագիր կնքել Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ի 24-ամյա հարձակվող Կիլիան Մբապեի հետ:

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՌՄԲԱՐԿՈՒՆ

Գերմանիայի չեմպիոն Մյունխենի «Բավարիայի» 30-ամյա հարձակվողը 51-րդ գոլը խփեց 2023 թվականին եւ այս պահին լավագույն ռմբարկուն է օրացուցային տարում:

Բունդեսլիգայի 15-րդ տուրում «Բավարիան» 3:0 հաշվով հաղթել էր «Շտուտգարտին», Քեյնը դարձել էր դուբլի հեղինակ:

Քեյնը տարվա առաջին կեսն անցկացրել է Լոնդոնի «Տոտենհեմում»:

Այս տարվա լավագույն ռմբարկուների մրցավազքի երկրորդ տեղում Անգլիայի չեմպիոն «Մանչեսթեր Սիթիի» 23-ամյա նորվեգացի հարձակվող Էրլինգ Հոլանդն է, որն այս տարի խփել է 50 գոլ: Նույնքան գոլ է խփել այս տարի նաեւ Պորտուգալիայի հավաքականի եւ Սաուդյան Արաբիայի «Ալ Նասրի» 38-ամյա հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուն:

Չորրորդ ցուցանիշն ունի Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ի 24-ամյա հարձակվող Կիլիան Մբապեն՝ 49 գոլ:

ՎՆԱՍՎԱԾՔ Է ՍՏԱՑԵԼ

Մադրիդի «Ռեալի» ավստրիացի պաշտպան Դավիդ Ալաբան ծանր վնասվածք է ստացել «Վիլյառեալի» դեմ Իսպանիայի առաջնության 17-րդ տուրի խաղում (4:1):

Բուժզննումն Ալաբայի մոտ ախտորոշել է ծնկի խաչաձեւ կապանների պատռվածք. հաղորդում է Արքայական ակումբի մամուլի ծառայությունը: Դավիդ Ալաբան առաջիկայում կվիրահատվի:

Այս մրցաշրջանում նույն վնասվածքից ստացել են նաեւ «Ռեալի» բրազիլացի պաշտպան Էդեր Միլիտաոն եւ բելգիացի դարպասապահ Տիբո Կուրտուան:

Դավիդ Ալաբան 2021-ի ամռանը Մյունխենի «Բավարիայից» է տեղափոխվել «Ռեալ», որի հետ ընթացիկ մրցաշրջանում մասնակցել է 16 հանդիպման, կատարել 2 գոլային փոխանցում:

● Դեկտեմբերի 20-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Կուկարաչա» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ՎԱՐԿԱՅԻՆ

ՀԱՐՑ. Իրավունք ունի՞ գրավառուն (բանկ, վարկային կազմակերպություն, գրավատուն) առանց դատարանին տեղյակ պահելու (ծանուցելու) վաճառել գրավ դրված գույքը:

Կարինե Մինասյան (31 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ չի կարող: Եթե գրավի պայմանագրով կամ գրավառուի եւ գրավատուի միջեւ կնքված գրավոր համաձայնությամբ առկա է դրույթ՝ առանց դատարանի վճռի գրավ դրված գույքի իրացման մասին, ապա գրավառուն պարտապանի կողմից գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պարտավոր է գրավոր՝ պատշաճ ձեւով ծանուցել պարտապանին առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին (բռնագանձման ծանուցում)՝ համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 249 հոդվածի 2-րդ մասի:

Միաժամանակ հայտնում ենք, որ նույն հոդվածը սահմանում է նաեւ, որ բռնագանձման ծանուցումը պարտապանին հանձնելուց երկու ամիս հետո գրավառուն իրավունք ունի իրացնելու գրավի առարկան: Վերոնշյալ համաձայնության բացակայության դեպքում գրավ դրված գույքի հաշվին գրավառուի (պարտատիրոջ) պահանջները բավարարվում են դատարանի վճռով:

Այսպիսով, ֆինանսական կազմակերպությունը պետք է պարտապանին գրավոր ծանուցի գրավադրված գույքի իրացման վերաբերյալ, որից երկու ամիս հետո միայն կարող է իրացնել գույքը:

Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տեղեկացնում ենք, որ եթե կողմերի միջեւ կնքված պայմանագրով սահմանված է տույժի վճարման չափ եւ կարգ, ապա ֆինանսական կազմակերպությունն իրավասու է կիրառել դրանք մինչեւ պարտավորությունների ամբողջական մարումը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ ինչ կարգով է կատարվում Հայրենական մեծ պատերազմի վետերանների ավանդների փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձանց հաշվառումը:

Գնել Սահակյան (68 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Փոխհատուցում ստանալու համար Հայրենական մեծ պատերազմի վետերանը հաշվառման նպատակով իր փաստացի բնակության վայրի սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմին (Փարոս) անձամբ կամ, լիազորագրի հիման վրա, գործող ներկայացուցչի միջոցով ներկայացնում է սահմանված ձեւի դիմում եւ հաշվառման համար անհրաժեշտ փաստաթղթեր:

Հայրենական մեծ պատերազմի վետերանի պահանջով սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինը հաշվառումը կարող է իրականացնել վետերանի բնակության վայրում կազմակերպելով տնային այցելություն (ներառում է այցելություն բուժման վայր):

*ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն*

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայրենական մեծ պատերազմի վետերանների ավանդների փոխհատուցումը վճարվում է «ՀայՓոստ»-ի բաժանմունքի սպասարկող անձի կողմից տուն առաքելու միջոցով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Լենինգրադի, Արխանգելսկի եւ Մուրմանսկի շրջանների բնակիչները համացանցը հեղեղել են հյուսիսափայլի կադրերով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

**ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից**

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ______________
Ազգանուն՝ ______________
Առաքման հասցե՝ ______________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ______________

*Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.*

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	- 10 -15 - 2 + 1
Կոտայքի լեռներ	- 9 - 14 0 - 2
Կոտայքի նախալեռներ	- 5 - 8 + 2 + 4
Գեղարքունիք	- 10 - 14 - 2 + 2
Լոռի	- 7 - 12 +10 + 12
Տավուշ	- 3 - 8 + 4 + 8
Արագածոտնի լեռներ	- 10 - 15 - 1 - 3
Արագածոտնի նախալեռներ	- 4 - 6 + 2 + 5

Արարատ	- 4 - 6 + 5 + 7
Արմավիր	- 5 - 8 + 4 + 6
Վայոց ձորի լեռներ	- 10 -13 - 1 - 3
Վայոց ձորի նախալեռներ	- 4 - 6 + 5 + 7
Սյունիքի հովիտներ	- 5 - 8 + 4 + 6
Սյունիքի նախալեռներ	- 6 - 10 + 2 + 5
ԼՂՀ	- 4 + 1 0 + 1
Երեւան	- 5 + 2 + 1 + 2

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **18.12.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*